

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 36

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Ա. Զաքարյանը, Վ. Մովսիսյանը, Վ. Մկրտչյանը, Ն. Պետրոսյանը, Ս. Շուխյանը, Բ. Վարդանյանը, Հ. Վարդանյանը, Ս. Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Վարդանյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Վ. Վարդանյան/

5. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Վ. Վարդանյան/

6. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Վ. Վարդանյան/

7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Վ. Վարդանյան/

8. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Վ. Վարդանյան/

9. Աշտարակ համայնքին հանձնված հողամասերի ցանկից դուրս մնացած գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Վ. Վարդանյան/

10. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող, Սբ. Սարգսի փողոց N 73/7 հասցեում գտնվող անշարժ գույքը աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Վ. Վարդանյան/

11. Աշտարակ քաղաքի Քասախի կիրճ N 22/3 հասցեում ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Վ. Վարդանյան/

9- ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը և առաջարկեց ի գիտություն ընդունել Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի կատարման եռամսյակային հաշվետվությունը:

Զեկուցողը թվային արտահայտությամբ ներկայացրեց բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի արդյունքները:

9 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - *Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի: Միաժամանակ նշեց, որ արտոնությունները հիմնականում տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

9 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Վարդանյանը և առաջարկեց համաձայնություն տալ

համայնքային սեփականության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելուն և միաժամանակ, առաջարկեց սահմանել մեկնարկային գին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Վ. Մկրտչյանը և Ս. Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

9- ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Վարդանյանը և առաջարկեց Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասը մրցութային կարգով տրամադրել կառուցապատման իրավունքով միաժամանակ սահմանել մեկնարկային գին:

9 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 6 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ տրամադրելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Վարդանյանը և առաջարկեց համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքը 17 տարի ժամկետով առանց մրցույթի տրամադրել կառուցապատման իրավունքով, միաժամանակ սահմանել տարեկան վարձավճարի չափը:

8- ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Վ. Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Վարդանյանը և առաջարկեց Աշտարակ քաղաքի 535 թաղամասից 0.0429հա գյուղատնտեսական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարել կից ընդլայնվող հողամասի սեփականատիրոջը:

9- ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 8 - Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Վարդանյանը և առաջարկեց համայնքի վարչական տարածքում գտնվող, 535-009 ծածկագրով 0.0181հա գյուղատնտեսական նշանակության հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

Նախագծի շուրջ հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ս. Օվոյանը և Վ. Մկրտչյանը, որոնց Վ. Վարդանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

9- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 9 - Աշտարակ համայնքին հանձնված հողամասերի ցանկից դուրս մնացած գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Վարդանյանը և առաջարկեց համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում գտնվող 694-039 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասից 0.044հա արոտավայրը ճանաչել համայնքային սեփականություն և միաժամանակ սահմանել մեկնարկային գին:

9- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 10 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող, Սբ. Սարգսի փողոց N 73/7 հասցեում գտնվող անշարժ գույքը աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Վարդանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<Էյ Էյ Էս Ըքաունթինգ>> ՍՊԸ-ի կողմից տրված անշարժ գույքի վերաբերյալ եզրակացությունը, համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող, Ս. Սարգսի N 73/7 հասցեում գտնվող կիսակառուց շինություններն ու պարիսպը, դրանց պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին սահմանելու առաջարկություններին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Վ. Մովսիսյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Վ. Վարդանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

9- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - Աշխարակ քաղաքի Քասախի կիրճ N 22/3 հասցեում ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Վ.Վարդանյանը և առաջարկեց, հաշվի առնելով քաղաքացիների անվտանգությունը և հիմք ընդունելով համայնքապետարանի կողմից քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի եզրակացությունը, համաձայնություն տալ Քասախի կիրճ N 22/3 հասցեում գոյություն ունեցող և իրենից վտանգ ներկայացնող թվով 5 ընկուզենիները կտրելու և փոխարենը 15 նոր դեկորատիվ ծառեր տնկելու առաջարկությանը:

9- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2020 թվականի մայիսի 21-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն